ասումէ Առաքել Դաւրիժեցին, մտաբերելով իւր հովուական պարտաւորութիւնը «եդ, ասումէ, զանձն իւր ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի՝ ի վերայ ամենայն ժողովրդեան Բաղիշու, և արարեալ զսիրտ իւր իբր զկարծր վէմ և մտեալ առաջի թագաւորին (Ջահանշահի) ետ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց, տուեալ զձեռագիր՝ առնուլ զհարկս յամիրայէն Բաղիշու և տալ կայսերն (Ջահանշահին) առ ի մնալ երկրին ի խաղաղութեան։» Բռնաւորն ընդունեց կաթուղիկոսի երաշխաւորութիւնն և տուեց նորան «նշանագիր և հրաման՝ առնել զինչ և կամեսցի։ Արիաջան հայրապետը «վաղվաղակի ձիրնթաց արշաւմամբ» Թաւրէզից Բաղէշ գնաց և փառաւոր ընդունելութիւն գտաւ այնտեղի ամիրայից, խաղաղութեան պայմաններն որոշեց, հասաւ Խլաթ և Ջահանշահի զօրագլուխներին երկրորդ «ձեռագիր» տուեց, և հաստատեց խաղաղութիւնն երկու իշխանութիւնների մէջ։ Ինքն երեք ամիս նստաւ Բաղէշում և խոստացած հարկերն ստացաւ, տարաւ յանձնեց Ջահանշահին. Եւ ազատեաց, ասումէ պատմիչը, զամենայն խառնիճաղանճ ժողովուրդ զՀայ և զՏաճիկ ի ձեռաց թշնամեաց և ի դառն գերութենէ։ Այս ամէնն այսպէս լինելուց յետոյ՝ շատ բնական է, որ ժողովուրդն օրհնումէր Հայրապետին, շատ